

# Ո՛չ Ըսեք Խտրականութեան

## Մի՛ հանդուրժեք

## Մի՛ թողուք որ անպատիժ մնան

### Գանգատ ներկայացուցեք – Հաւատարմաբար խորհուրդ ստացեք

Նիու Մաուրթ Ուելլզի մէջ հակաօրինական է ձեզի դէմ խտրական վերաբերմունք ցուցաբերել (ձեզի հանդէպ անարդար վերաբերուիլ) հետեւեալ պատճառներով.

- տարիքի
- անկարողութեան
- միասեռականութեան
- ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակի
- ցեղային
- որպէս հոգատարի պատասխանատուութեան
- սեռի (ներառեալ դիեցնելու եւ յղութեան)
- սեռափոխուած գոյավիճակի

Այս օրէնքը ի զօրու է հետեւեալ պարագաներուն.

- երբ դուք գործի մը դիմեք
- աշխատանքի մէջ
- երբ տուն կամ յարկաբաժին մը վարձեք
- կառավարական դպրոցի մը, ուսումնարանի կամ համալսարանի մէջ
- երբ կ'օգտագործեք սպասարկութիւններ ինչպէս՝ խանութներ, դրամատուներ, հիւանդանոցներ, պանդոկներ, գրանցուած ակումբներ, վայելքի վայրեր եւ մարզական յարմարութիւններ:

**Հակա-Խտրականութեան Խորհուրդը (Anti-Discrimination Board) կարող է ձեզի ձրի խորհրդապահաբար թելադրութիւններ տալ:**

Հեռաձայնեցեք (02) **9268 5544** կամ **1800 670 812** Միտնիէն դուրս գտնուողներուն համար: Եթէ թարգմանիչի մը պէտք ունիք նախ հեռաձայնեցեք **131 450**: Էլեքտրոնային նամակով՝ **adbcontact@justice.nsw.gov.au**

Այցելեցեք մեր կայքէջը. **www.antidiscrimination.justice.nsw.gov.au** գանգատի դիմումնագիր մը ունենալու համար: Կրնաք գանգատը ներկայացնել ձեր լեզուով: